

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առան լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւանիւր բառին 2 կոպեկ.
Տէլեֆոն № 253.

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի օր, ամսիս 19-ին,

ՄԵԼԻՔՈՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆԻ

մահվան տարեգրքին առիթով Վանքի մայր եկեղեցում ժամուցանվելու է պատարագ և ապա հոգեհանգիստը Պատարագի սկիզբը 11 ժամին, իսկ հոգեհանգիստը ժամի 1-ին:

1—1

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Գերի դիւղ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ.
Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութիւնը, Արեւելահայերի միջազգային կոնգրէսը Հռոմում, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՎԻՐ-ՆԵՐ.—ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-ԿԱՆ. Ինչ է գեղարուեստը. Անգլիական բարբեր.

Գ Ե Ր Ի Գ Ի Ի Ղ

Շատ քիչ է պատահում, որ մեր գիւղը այնքան պարզ և յուզիչ զոյներով ներկայացնէ իր ամբողջ խեղճութիւնը, ինչպէս ներկայացրեց Հայկական գիւղը «Մշակի» երեկվայ համարում տպված թղթակցութեան մէջ: Նա գուտ շինական մի նամակ է, անպաճոյճ, բայց փաստային, կարճ, բայց շատ ազդու:

Հարիւր տուն բնակիչ, կէսը ամենադառն աղքատութեան մէջ: Երբ մեզ առում են, որ գիւղական երեխաները իրանց մայրերի հետ բաճարով են արտ վարում, մենք հասկանում ենք, որ այդ դժոխային աշխատանքը մարդիկ յանձն են առնում, որպէս զի հարկադրված չը լինեն մուսուլմանի պարկը շալակել: Կա դեռ հասկանալի է: Բայց երբ մեր առջև հաշուում են թէ ինչ հարկեր է տալիս այդ

գիւղացին իր կալուածատիրոջ, մենք ապշում ենք: Ուստաստանում գիւղացիների և կալուածատիրոջ յարաբերութիւնները որոշ կերպով սահմանված են յատուկ օրէնքներով: Եթէ ընդունենք, որ հազարաւոր գիւղացիներ առանձին պայմանով են ստացել կալուածատիրական հողերում ապրելու իրաւունքը, մեզ համար դարձեալ հրէշաւոր պիտի լինեն այն տուրքերը, որ տալիս է գիւղացին: Բերքի մի երրորդական մասը—դա մի չափ է, որ մօտեցնում է հազարաւորներին այն դրուժեան, որի մէջ գտնվում են Պարսկաստանի Սալմաստ գաւառի Սառնա գիւղի բնակիչները, որոնց գերութեան մասին նոյնպէս տպված է մի թղթակցութիւն «Մշակի» երեկվայ համարում: Հազարաւոր կաթնատու կովերն էլ ենթարկված են հարկի և սա, կարծում ենք, մի այնպիսի կարգ է, որ նոյն իսկ Սառնա գիւղում չը պիտի գոյութիւն ունենայ: Այո, անհաւատալի է թւում, որ բացի այդքան տուրքերից գիւղը պարտաւորված լինի վճարել կալուածատիրոջ երեք հազար ռուբլի: Եթէ սրանք ձիւղ փաստեր են, այն ժամանակ մեզ կը մնայ զարմանալ, որ այսքան կորած, խեղճ և անօգնական գիւղ է գտնվում մեր երկրում: Բայց մի բան, որ անկասկած է իբրև գիւղական ընդհանուր երևոյթ, դա այն

է, որ գիւղը բացի իր զարմանալի աղքատութիւնից, բացի իր անօրինակ տուրքերից դեռ պիտի կրէ իր «բանիմաց» մարդկանց հարստահարութիւնների լուծը: Այստեղ մենք կանգնած ենք մեր գիւղի հին, հրէշաւոր ցաւի դիմաց: «Բանիմացները» փող են հաւաքում, որպէս զի պատշաճաւոր իշխանութեան դիմում անեն կալուածատիրական տուրքերի մասին, բայց ուսում են այդ փողը: «Բանիմացները» մէկը գիւղական հարկեր հաւաքող է. նա առնում է, գիւղացին տալիս է, որովհետեւ հաշիւ չը գիտէ. և միայն պատահաբար գիւղի մանրամասնաւոր գտնում է, որ բաճարով արտ վարողները այդ «բանիմաց» տղաւորին հարկւր ռուբլի հարկ են տալիս...

Ահա մեր գիւղի իրական տիպը: Անբեր-բերութիւն մի քանի տարիների ընթացքում—սա ինքն ըստ ինքեան բաւական մեծ զգալիութեամբ ինչ է: Բայց բնական պատահարի դէմ ինչպէս կարող է պաշտպանվել գիւղացին, երբ նա իր հացը հայթայթելու համար միայն բաճ ունի, երբ հաշիւ չը գիտէ, երբ «բանիմաց» մարդկանցից ազատ չէ: Մտէք այդ բոլոր տխուր հանգամանքները մէջ, աշխատեցէք գտնել պատշաճները—և ձեր առաջ մի բան դուրս կը գայ, մի հատ ամենազրկաւոր, հիմնական պատճառ—տգիտութիւն: Տգիտութիւնն է հարկ տալիս «բանիմացին», տգիտութիւնն է գիւղացուն անլեզու արարած դարձնում կալուածատիրոջ ապօրէն բնահաճութիւնների առաջ: Տգիտութիւնը ծայրայեղ աղքատութիւն է, գերութիւն է: Կրկնում մանրամասնաւոր չափ զգար-զացած մի մարդ կարողանում է հարկւր տուն մի ժողովրդի աջը բաց անել, ցոյց տալ գիւղական ցեղերի քաջագործութիւններից մէկը: Մի՞թէ սա մի պարզ ապագոյց չէ, որ բաճարով վար անողները անհա-մեմատ բախտաւոր կը լինեն, եթէ նրանց

պատու խաւարը այնքան թանկ չը լինէր: Մեր ժամանակներում չը կան բարեխոնեան, եղբայրական գերութիւններ: Բայց եղբայրական մասաւոր խաւարը շարունակում է գերի պահել մեր ժողովուրդը այս լուսաւոր դարում, այս խաղաղ և հանգիստ ժամանակներում, պարզ և դրական օրէնքների թագաւորութեան մէջ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ղ

Ներկայ անբերութիւնը պատահական բան չէ մեր երկրի համար: Այդ գիտենք ամենքս, դիտենք, օրինակ, որ վերջին մի շարք տարիներում մեր տեղական մամուլը արձանագրում էր գիւղական քաղաքացիական շատ և շատ դէպքեր: «Кавказское Сельское Хозяйство» շաբաթաթերթի մէջ պ. Վարդանեանց բոլոր տեղեկութիւնները հիման վրա յայտնում է այն իրողութիւնը, որ վերջին ամսն տարիների ընթացքում հինգ անգամ անբերութիւն է եղել Կովկասում. ուրիշ խօսքերով, մեր աղքատիկ երկրը մի տարի կուշտ է լինում, մի տարի քաղցած: Նրանցից, ինչպէս տեսնում էք, ունի տեղական բնաւորութիւն, անաջող հունձերը կըրկնվում են մեր մէջ պարբերաբար: Կան, ուրեմն, մշտական պատճառներ, որոնք հասնում են մեր գիւղական տնտեսութիւնը այդպիսի դրութեան: Թողւածագիւր թւում է այդ պատճառների զլլաւորները:

Մարայեղ սակաւահողութիւն (մանաւանդ արեւմտեան Անդրկովկասում), որ տարբերաբար մեծանում է, որովհետեւ ազգաբնակչութիւնը աճում է. այս հանգամանքը երկրագործութեան նախնական տեխնիկայի հետ միացած՝ առաջացնում է հողի ուժանպատութիւն: Բոլոր երկրագործները (թէ գիւղացիներ և թէ կալուածատէրեր) ծայրայեղ չափով պարտքի տակ են ընկած, մի հանգամանք, որ ոչ միայն խլում է գիւղական տարրի մասնաւոր նրա տնտեսութեան զուտ արդիւնքը, այլ և

բաժիշտը, յղանալով իր մտքում իրերի մի որ և է կարեւոր և աչքի ընկնող յատկութիւն՝ վիշտ կամ խնդութիւն, գործվալից սէր կամ բուռն զայրոյթ, այս կամ այն դադափալը, այս կամ այն զգացմունքը, ինչ էլ լինեն այդ դադափալն ու զգացմունքը, կարող է ուղարկել չափ ընտրել և խմբակցել այդ բարոյական և մաթեմատիկական յարաբերութիւնները այնպէս, որ արտա-յայտի իր մտքում յղաքած յատկութիւնը:

Այդպիսով, բոլոր արուեստներն էլ մտնում են վերոյիշեալ սահմանման մէջ, որից պարզ երևում է նոյնպէս և գեղարուեստի կարեւոր նշանակութիւնը:

Մարդս, ամասնական վիճակից դուրս գալուց յետոյ՝ սկսում է հետաքրքրվել այն մշտնջենաւոր և նախասկզբնական պատճառներով, որոնցից կախված է իր և իր նմանների գոյութիւնը, այն գերիշխող և էական յատկութիւններով, որոնք գրգռում են իրանց կիճը իրերի նոյն իսկ ամենաչնչին մանրամասների վրա: Այդ հետաքրքրութեանը բաւարարութիւն տալու համար կայ երկու ճանապարհ. առաջինը՝ գիտութիւնը, որի միջոցով մարդս յայտնագործում է այդ հիմնական պատճառներն ու օրէնքները և արտայայտում է նրանց որոշ բանաձևերով և վերացական բառերով. երկրորդը՝ գեղարուեստը, որի միջոցով մարդս արտայայտում է այդ հիմնական պատճառներն ու օրէնքները ոչ չոր ու ցամաք, ամբողջին անմատչելի և միայն սակաւաթիւ մասնագէտների համար հասկանալի սահմանումներով, այլ զգալի կերպով և դիմելով ամենատարրական մարդու առողջ գատողութեան, զգայարաններին և սրտին: Գեղարուեստը այն առանձնապատկութիւնն ունի, որ միանգամայն և՛ վսեմ է և՛ ժողովրդական, որ արտայայտում է աշխարհում եղած ամենավսեմ բաները և արտայայտում է ամենքի համար:

Տ. Յովհաննիսեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ինչ է ԳԵՂԱՐՈՒՆԵՍԸ

(Ըստ Տէնի)

IV

Այդ սահմանման առաջին մասն է միայն էական:

Ամեն գեղարուեստի մէջ պէտք է լինի կապակց մասերի մի ամբողջութիւն, որ արուեստագէտը փոփոխում է այնպէս, որ կարողանայ արտայայտել մի որ և է յատկութիւն: Բայց անհրաժեշտ չէ, որ բոլոր գեղարուեստների մէջ էլ այդ ամբողջութիւնը համապատասխան լինի իրական առարկաներին: Բաւական է, որ գոյութիւն ունենայ այդպիսի մի ամբողջութիւն: Նմանողական արուեստները, —բանադակագործութիւնը, նկարչութիւնը և բանաստեղծութիւնը ընդօրինակում են իրական առարկաները և նրանց մէջ եղած օրգանական ու բարոյական կապակցութիւնները, կախումները և համեմատութիւնները: Իսկ միւս երկու արուեստները, ճարտարապետութիւնը ու երաժշտութիւնը, որոնց նիւթը կազմում են մաթեմատիկական յարաբերութիւնները, ոչինչ չեն ընդօրինակում, ոչինչ նմանելու չեն ձգտում:

Վերջիններ նախ այն մաթեմատիկական յարաբերութիւնները, որոնք մատչելի են մեր աչքին: Փայտի կամ քարի մի կտոր կարող է ունենալ մի երկրաչափական ձև, խորանարդի, կոնի, գլանի կամ գնդի ձև. այդ կը լինի մաթեմատիկական յարաբերութիւնների առաջին շարքը: Նրա բարձրութիւնը կարող է լինել երկու, երեք, չորս անգամ աւելի քան հաստութիւնը կամ լայնութիւնը. այդ կը կազմի մաթեմատիկական յարաբերութիւնների երկրորդ շարքը: Վերջապէս այդ փայտի կամ քարի կտորներից մի քանիսը կարող են դարձված լին-

նել մէկ-մէկի վրա կամ իրար կողքի համաչափօրէն, որոշ հեռաւորութեամբ և անկիւններով. այդ էլ կը լինի մաթեմատիկական յարաբերութիւնների երրորդ շարքը:

Այդ յարաբերութիւնների վրա է հիմնված ճարտարապետութիւնը: Ճարտարապետը, յղանալով իր մտքում մի որ և է գերիշխող յատկութիւն, անդորրութիւն, պարզութիւն, ոյժ և վայելչութիւն, ինչպէս երբեմն Յունաստանում և Հռոմում, կամ թէ տարօրինակութիւն, բազմազանութիւն, անհունութիւն և ֆանտազիա, ինչպէս գոթական շրջանում, ընտրում է և խմբակցում իր ձեռքի տակ եղած նիւթերի կապակցութիւնները, համեմատութիւնները, չափերը, ձևերը, դիրքերը, մի խօսքով յարաբերութիւնները այնպէս, որ կարողանայ արտայայտել իր մտքում յղաքած յատկութիւնը:

Բացի տեսանելի քանակութիւններից կան և ականջին մատչելի քանակութիւններ, այն է՝ հնչիւնը կազմող օղային ձոճումների արագութիւնները:

Այդ ձոճումները, քանակութիւն լինելով, կարող են կազմել ամբողջութիւններ՝ բաղկացած այնպիսի մասերից, որոնք կապված են իրար հետ մաթեմատիկական օրէնքների համաձայն: Ամենից առաջ, ինչպէս յայտնի է, երաժշտական հնչիւնը բաղկացած է հաւասար արագութիւն ունեցող անընդհատ ձոճումներից, և արդէն այդ հաւասարութիւնը մի որոշ մաթեմատիկական յարաբերութիւն է հաստատում նրանց մէջ: Այնուհետեւ, երկու հնչիւններից մէկը կարող է բաղկացած լինել երկու, երեք, չորս անգամ աւելի արագ ձոճումներից՝ քան միւսը: Ուրեմն այդ երկու հնչիւնների մէջ կայ մի մաթեմատիկական յարաբերութիւն, որ և նշանակում են երաժշտական տետրերում, գրելով նրանց խաղերը որոշակի հեռաւորութեամբ մէկը միւսին: Հետևաբար, եթէ վերջինիս լինենք երկուսի տեղ մի քանի հատ իրարից հաւասար հեռաւորութեամբ դասաւորված հնչիւններ, կը

ստանանք մի աստիճանական շարք: Այդ շարքը ձայնաշարն է (դամբա), և բոլոր հնչիւնները այդպիսով կապվում են իրար հետ, նախով ձայնաշարում իրանց բուն տեղին: Այդ կապերը կարող են լինել երկու տեսակ—միմասն յաջորդող ձայների կամ թէ միաժամանակ հնչող ձայների մէջ: Առաջին տեսակ կապակցութիւնից առաջանում է մեղօղիան (բաղբուրթիւն), երկրորդ տեսակից՝ ներդաշնակութիւնը (հարմոնիա): Հետևաբար, երաժշտութիւնն էլ իր երկու էական բաժիններով հիմնվում է, ինչպէս և ճարտարապետութիւնը, մաթեմատիկական յարաբերութիւնների վրա, որ արուեստագէտը կարող է խմբակցել և կերպարանաւորել:

Բայց երաժշտութիւնը ունի և մի երկրորդ սկզբունք, մի տիպ ապր, որ տալիս է նրան առանձին ոյժ և արտակարգ կարեւորութիւն: Բացի իր մաթեմատիկական յատկութիւններից՝ հնչիւնն ունի և այն յատկութիւն, որ նման է ճիւղի: Իր այդ յատկութեան հնչոյթիւ նա արտա-յայտում է անմիջապէս և անզուգական ճշդութեամբ, քնքշութեամբ և ոյժով կենդանի ու զգալուն էական տանջանք, հրճուանք, բարկութիւն, զայրոյթ, բոլոր վրդովմունքները և բոլոր յղիւրը, մինչև նրանց անշնամարկի ներութիւնները և ամենազգալուն խորքերը: Դրա վրա է հիմնված Գլեյկի և գերմանացի արտայայտիկ երաժշտութիւնը ի հակադրութիւն Բոսսինիի խաղաղների քաղցրեղ երաժշտութեան: Սա-կայն ինչ տեսակէտ էլ գերադասած լինի երաժշտութեան հեղինակը, այդ երկու տարրն էլ (հնչիւնների քաղցր ու ներդաշնակ խմբակցութիւնը և նրանց արտայայտչական ոյժ) միշտ գոյութիւն են ունենում միատեղ, և հնչիւնները միշտ կազմում են ամբողջութիւններ այնպիսի մասերի, որոնք կապված են լինում միմյան-մայն թէ մաթեմատիկական յարաբերութիւններով և թէ այն համապատասխանութեամբ, որ նրանք ունեն բարոյական էական կրքերի և զանազան ներքին վիճակների հետ: Այնպէս որ ե-

